Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի» համար ՖS 2019.

Ստորագրվեց «Կայուն ոռոգման համակարգ Սայաթ-Նովա գյուղի համար» ծրագիրը

2020 թ. մարտի 25-ին, ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Ջուն Յամադան և «Տնտեսական հետազոտությունների և զարգացման աջակցության կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն, պարոն Ռուբեն Սարուխանյանը ստորագրեցին «Կայուն ոռոգման համակարգ Սայաթ-Նովա գյուղի համար» ծրագրի 66,224 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային պայմանագիրը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում:

Ծրագրի նպատակն է ապահովել խողովակաշար (520մ) ներկայիս ոռոգման տարածքը ընդլայնելու, ինչպես նաև տեղադրել արևային ֆոտովոլտային համակարգ՝ էլեկտրաէներգիայի աղբյուրն ապահովելու նպատակով և իրականացնել Արարատ մարզի Սայաթ-Նովա գյուղի ֆերմերների համար վերջիններիս կարողությունների զարգացմանը նպատակաուղղված մի շարք մասնագիտական դասընթացներ: Արդյունքում, կբարելավվի գյուղատնտեսության արտադրողականությունը, ինչը կնպաստի նաև ֆերմերների եկամուտների ավելացմանը: Ավելին, ակնկալվում է, որ ջրային աղբյուրների և գյուղատնտեսական հողերի արդյունավետ օգտագործումը կխթանի կայուն զարգացում, որի արդյունքում գյուղում բնակվող բոլոր ֆերմերները և նրանց ընտանիքի անդամները, ընդհանուր հաշվով, 320 անձ, օգուտ կքաղեն այս ծրագրից: